

Դ. Գրիգոր Զազոյան

ՄԱՏԵՆԱՇՈՐ Հ. Մ. Ը. Մ. Ի. ԹՖԻ 1



ՊԱՐՏԱԿԱՆՈՐԻՉ ՀՐԱԶԱՆԳՆԵՐ

Հ. Մ. Ը. Մ. Ի.

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀ. ՈՒ.ԽՄՓԻԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ



Կ. ՊԱԼԻՍ 1921 ԱԵՊՏԵՄԲԵՐ

ՏԱՐԵԿԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐԴԻ

ՊԱՐՏԱՒՈՐԻՉ ՀՐԱԶԱՆԳՆԵՐ

Հ. Մ. Ը. Մ. Կ.

ՏԱՐԵԿԱՆ ԲՆԴՀ. ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հ. Մ. Ը. Մ. Ի ԵՒ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ
ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
26, ԽօՐԱՎԱՆԻՔԵԱՆ ԽԱՅԻ, 26
ՍԻՐԵԿԻ-ԱՐԱՄՊՈՎ
ՀԵՌԱՋԱՅԻ ՔԻՒ ԱՐԱ. 2146

1. Ամէն մրցորդ, արլեքիկ յանձնախռոմ-
բին, իր արլեքիկ պետին և դատաւորներուն
բոլոր հրամաններուն, տառապէս պարտի
հնագանդիլ :

2. Ամէն մրցորդ պարտի կանխաւ լաւ
մը ուսումնասիրել բոլոր մրցումներուն օ-
րէնքները, մասնաւորաբար այն խաղերունը,
որոնց ինքը պիտի մասնակցի :

3. Ամէն մրցորդ արլեքիկ պետէն կ'ստա-
նայ վաւերագիր մը, որ պիտի ծառայէ իբր
մաից և մասնակցութեան տոմս : Վերոյիշեալ
վաւերագիրները ատենին արլեքիկ յանձնա-
խռոմին կոզմէ մասնաճիւղերու արլեքիկ
պետերուն պիտի զրկուին :

4. Ամէն մրցորդ մրցումներու որոշեալ
ժամանակէն կէս ժամ առաջ պարտի ներկայ
գտնուիլ մարմնամարզիկներու յատկացեալ
վայրը, բժշկական քննութենէ վերջ մասնակ-
ցութեան թիւերը ստանալու համար : Նոյն-
պէս բոլոր մասնաճիւղերու արլեքիկ պետերը
ժամանակին պարտին մարմնամարզիկներու
յատկացեալ վայրը գտնուիլ :

5. Ամէն մրցորդ դաշտ ելլելէ առաջ
պարտի մարմնամարզական պատշաճ հա-
գուստներ կրել : Բոսպիկ վազելը արգիլուած է :

6. Մասնակցութեան թիւերը կը դրուին մարզիկներու կուրծքերուն վրայ, բացի հեծելանիւի և վաղքի մրցումնելուն մասնակցողներէն։ Այս վերջինները երբ տարրեր մրցումներու ևս մասնակցին պարտին իրենց մասնակցութեան թիւերնուն տեղը փոխել, այսինքն՝ կունակէն կուրծքին վրայ պէտք է տեղափոխեն։

7. Որեւէ մրցման սկսուելէ 10 վայրկեան առաջ մասնակցողներուն բերանացի յայտարարութիւն մը տեղի պիտի ունենայ ամէնուն զատ զատ։ Խոկ վերջնական կոչը՝ տեղի պիտի ունենայ սկառտական փողով։

8. Փողին հնչումէն երկու վայրկեան վերջ եթէ վազելու մասնակցողները իրենց որոշեալ վայրը չներկայանան, այսինքն երբ իրենց անուններու ցանկը կարդացուի և ներկայ չըլլան, մրցման մասնակցութենէ կը զրկուին։ Մրցման մը յետաձգումը մի միայն բժիշկին խորհրդով կարելի է։

9. Եթէ մրցումը ցատկելու կամ նետելու վերաբերեալ խաղ մըն է, բացակայ եղող մրցորդ մը իր կարգը միայն կը կորսնցնէ։ Այսինքն՝ երբ մրցորդ մը երկրորդ փորձի ատեն իր անունը կարդացուելէն առաջ կը ներկայանայ և իր ներկայութիւնը կը տեղեկացնէ նոյն խաղին վարիչ դատասորին, երկրորդ փորձին կրնայ մասնակցիլ և ընկերներուն հետ իր մրցումը կը շարունակէ։

10. Բարձրութիւն ցատկելու մէջ մըրցորդները իրենց ընտրած բարձրութենէն ըուկելու աղատ են. սակայն եթէ այդ բարձրութենէն երեք անգամ չկրնան անցնիլ, խաղին դուրս կ'ելլեն։ Խոկ այն մրցորդը որ

իր ընկերներուն որոշ բարձրութենէ մը ցատկած միջոցին մրցավայրը կը ներկայանայ, պարտի անոնց բաձրութենէն ցատկել և եթէ երեք անգամ անյաջող ըլլայ, գուրս կ'ելլէ։

11. Եթէ մրցման ընթացքին որ և է անհասկացողութիւններ տեղի ունենան, ատունք կը կարգադրուին մրցորդին պատկանած մասնաճիւղի պիտին և հաշտարար դատաւորին միջնեւ։

12. Ամէն մրցորդ միայն երեք մասի կը բնայ մասնակցիլ։

13. Մրցորդ մը դաշտին վրայ իր հետ որ և է հետեւորդ պէտք չէ ունենայ։

14. Մրցման պահուն երբ որ և է մրցորդ այլեւս չուզեր փորձերը շարունակել, դաշտէն հեռանալէն առաջ պարտի իր մեկնումը տեղեկացնել նոյն խաղին վարիչ դատաւորին։

15. Նոյն պահուն որ և է մրցման չը մասնակցող մրցորդներ չեն կրնար դաշտին վրայ կենալ։ Առաջին ազգարարութեան կրկնումէն անմիջապէս վերջ դաշտէն բոլորվին պիտի հեռացուին։


16. Բացի ցատկելու ձողերէն, որ և է մրցորդ չի կրնար իր սեփական մարմնամարդկան գործիքը գործածել։

17. Դաշտէն հեռացուիլը յորմար դատաւած որ և է մարզիկի համար՝ նախ հաշտարար դատաւորին հաւանութիւնը պէտք է առնել։

18. Բացի օրուան դատաւորներէն և մըրցորդներէն, լուսանկարիչներու, հետաքրքիրներու դաշտ մտնելը արգիլուած է։ Այս օրէնքին տառապէս գործադրման պաշտօն յանձնուած է շրջուն սկառտ պահակախումբե-

ըու , որոնց հրամաններուն պարտին հնաւ-
զանդիլ նոյն իսկ կարգադիր դատաւորները :
Սկսուաներու հանդէպ ըլլալիք որ և է բո-
ղոք կ'ըլլայ ուղղակի պահակապետին : Աթ-
լէթիք յանձնախումբը միայն դաշտէն ներս
մանելու արտօնութիւնը կրնայ տալ մատնա-
ւոր տումակով մը :

19. Ամէն անոնք որոնք օրուան սկառու-
պահակներուն ազգարարութիւններուն չեն
հնապանդիր , սկառու պետին հաւանու-
թեամբը նոյն իսկ մրցման ըրջանակէն բոլո-
րովին կը հեռացուին :



ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

ՈՒԺ ԱԼԱԾ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼ

1. Մրցումը կ'սկսի 1,35 մետր բարձրու-
թինէն և մինչեւ 1,50 մէթր 5 ական սանիթի
մեթր կը բարձրացուի և յետոյ՝ 2 ական սան-
թիմեթր : Իւրաքանչիւր բարձրութեան համար
միայն երեք փորձ թոյլատելի է :

2. Եթէ մրցորդ մը ցատկելու համար
սատում մը կ'ընէ , սակայն ձողին վրայէն
չանցնիր , փորձ մը կը նկատուի : Իսկ առանց
սատում ընելու եթէ ձողին տակէն կ'անց-
նի , երեք անգամ կրկնուելու պարագային
փորձ մը կը նկատուին :

3. Որ և է բարձրութեան չափը կ'որոշուի
ձողին ամենացած մասին վերի եղերքին և
հողին միջեւ եղած ուղղահայեաց հեռաւու-
րութեամբ :

4. Մրցորդնելը երբ իրենց կարգը գայ ,
նողին վրայ իրենց ուղած նշանները կրնան
դնել , սակայն իւրաքանչիւր սատումէն ան-
միջապէս վերջը զանոնք պէտք է ջնջեն կամ
վերցնեն :

5. Եթէ որ և է բարձրութինէ մը բոլոր
մրցորդները չկրնան անցնիլ , առաջնութեան
կարգը որոշելու համար չորրորդ յաւելուա-
ծական պատեհութիւն մը կը արուի : Եթէ
այդ բարձրութինէն չկրնան ցատկել , առաջ-
նութեան կարգը որոշելու համար հարկ է
բարձրութիւնը նուազեցնել , իսկ այդ պարա-
գային ալ եթէ որոշ արգիւնք մը ձեռք չը
բերուի , այդ կարգը կ'որոշուի բաղդով :

ԿԵՑԱԾ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ

1. Մրցումը կ'սկսի 1.10 մէթր բարձրութենէն և մինչեւ 1.25 մէթր 5 ական, յետոյ 2 ական սանթիմէթր կը բարձրացուին։
(Տեսնել նաև ոյժ առած բարձրութիւն ցալկութիւն 3 և 5 հասուածները)։

2. Անմիջապէս որ մրցորդը կը պատրաստուի ցատկել, հետևեալ շարժումները փորձ մը կը նկատուին։

I) Եթէ աջ ոտքը երկու անգամ՝ հողէն բարձրացնէ։

II) Եթէ ձախ ոտքը երկու անգամ՝ հողէն բարձրացնէ։

III) Եթէ իւրաքանչիւր ոտքը յաջորդաբար մէկ անգամ՝ բարձրացնէ։

IV) Եթէ աջ ոտքը երկու անգամ՝ հողին վրայ սահեցնէ։

V) Եթէ ձախ ոտքը երկու անգամ՝ հողին վրայ սահեցնէ։

VI) Եթէ իւրաքանչիւր ոտքը հողին վրա յաջորդաբար մէկ անգամ՝ սահեցնէ։

VII) Եթէ աջ ոտքը մէկ անգամ՝ բարձրացնէ և ձախ ոտքը մէկ անգամ՝ սահեցնէ։

VIII) Եթէ ձախ ոտքը մէկ անգամ՝ բարձրացնէ և աջ ոտքը մէկ անգամ՝ սահեցնէ։

IX) Եթէ աջ ոտքը մէկ անգամ՝ բարձրացնէ և մէկ անգամ՝ սահեցնէ։

X) Եթէ ձախ ոտքը մէկ անգամ՝ բարձրացնէ և սահեցնէ։

ՈՅԺ ԱՐԱԾ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ

1. Ամէն մրցորդ երեք սատումի իրաւունք ունի։ Երեք յաւելուածական պատեհութիւններ կը արուին լաւագոյն երեք մըր-

ցորդներուն և այս վեց սատումիներուն արդիւնքն առաջնութեան կարգը կ'որոշուի։

2. Եթէ որևէ մրցորդ նշանատախտակէն դուրս հողին դպչի իր մարմնոյն որևէ մասովը, ըլլայ դէպի առաջ կամ թէ նշանատախտակին քովի կողմերը, այդ սատումը չհաշուածիր, սակայն փորձ մը կը նկատուի։

3. Սատուման հեռաւորութիւնը կը չափուի ցատկելու նշանատախտակին դուրսի եղերքէն ցատկած տեղւոյն ամենաետևի հետքին ուղղահայեց երկայնութեամբը։

4. Եթէ 6 սատումներէն վերջ երկու կամ աւելի մրցորդներ հաւասար ըլլան, մէկ պատեհութիւն մը ևս կը արուի։

5. Ամէն մրցորդ բուն փարձերուն սկսուելէն անմիջապէս առաջ նախնական փորձ մը ընկուած արածուածէ, միայն թէ չը չափուիր։

6. Մրցորդ մը հողին վրայ կրնայ նշան դնել, սակայն իւրաքանչիւր փորձէն վերջ պարտաւոր է զայն վերցնել կամ ջնջել։

ԿԵՑԱԾ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ

Տեսնել ոյժ առած բարձրութիւն ցատկելու թիւ 2 հասուածին բոլոր օրէնքները։ Իսկ մրցորդներու կարգը որոշելու համար տեսնել նոյն խաղին թիւ 3 և 5 յօդուածները։

ԵՐԵԲ ՔԱՅԼ ՅԱՏԿԵԼ

1. Միայն յաջորդական սաքերով եղած սատումները թոյլատերէն են։

(Տեսնել նաև ոյժ առած երկայնութիւն ցատկելու թիւ 1, 2, 3, 4, 5 և 6 յօդուածները)։

ԶՈՂՈՎ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼ

1. Մրցումը կ'ակաի 2,20 մէթր բարձրութենէն և մինչև 2,50 մէթր 10 ական, իսկ անկէ վերջ 5 ական սանդիմէթր կը բարձրացուի:

(Տեսնել նաև ոյժ առած բարձրութիւն ցանկելու թիւ 2, 3 4 և 5 յօդուածները):

2. Որևէ մրցորդ իր սեփական եղէքեայ ձողը կրնայ գործածել, սակայն ոչ մէկ պարագայի տակ, ըլլայ ցատկած ստենը և կամ թէ օղին մէջ, վարի ձեռքը վերինէն վեր չի կրնար փոխադրել նմանապէս՝ վերի ձեռքը ձողն ի վեր չի կրնար սահեցնել:

ՍԿՈՒԱՐԱԿ ՆԵՏԵԼ

1. 90 աստիճաննոց հատուածէ մը դուրս նետուածները չեն հաշուուիր:

2. Մրցումներէն առաջ շրջանակին մէջն ոչ մէկ նախափորձ թողլատրելի չէ:

3. Նետուածք մը ապօրինի կը նկատուի երր մրցորդը իր մարմնոյն որևէ մասովը զրջանակին առջեւի կէսէն դուրս հողին կը դպի կամ թէ իր նետուածքը նշանակուելէն առաջ դուրս կը ցատկէ: Նաև, եթէ նետուած միջոցին կամ անկէ առաջ շրջանակին մետաղեայ եղերքին վրայ կոխէ, կամ թէ նետելէն վերջ, մրցորդը իր մասովը կամ ձեռքովը շրջանակին առջեւի մետաղեայ մասին կամ հողին դպի: Մրցորդը իր հաւասարակշռութիւնը գտնելէն անմիջապէս վերջ շրջանակին ետևի կողմէն դուրս կ'ելլէ:

4. Իւրաքանչիւր մրցորդի եւեֆ փորձ բոլուսրելի է, իսկ երեք լաւագոյններուն երեք յաւելուածական պատեհութիւններ կը տըրուին, որմէ վերջ առաջնութեան կարգը կ'ուրոշուի:

ԵՐԿԱԹ ՆԵՏԵԼ

Տեսնել սկաւուակ նետելու օրէնքները: ՆԻՇԱԿ ՆԵՏԵԼ

1. Նիզակ կը նետուի 10 սանթիմեթր խորութիւն ունեցող նշանատախտակէ մը, որ հաստատապէս հողին մէջ գամուած պէտք է ըլլայ:

2. Նետուածք մը ապօրինի է երբ մրցորդը իր մարմնոյն որ և է մասովը նշանատախտակէն դուրս հողին դպի իր նետուածքը նշանակուելէն առաջ:

3. Նետուածք մը կանոնաւոր փորձ կը նկատուի, սակայն չի չափուիր եթէ նիզակը նախ երջաթեայ ծայրին վրայ չինայ, այսինքն՝ եթէ նախ ետեւի ծայրը հողին դպի:

4. Նետուածք մը կը չափուի նիզակին ինկոծ տեղին և նշանատախտակին կամ անոր ուղղութեան միջեւ եղած ուղղահայեաց հեռաւորութիւնովը:

(Տեսնել նաև Սկաւուակ նետելու թիւ 4 հատուածք):

ՎԱՐՅԱՅԻ

1. Ճամբայ հանելու համար հետեւեալ հրամանը պիտի տրուի: Գծերնուուգ վրայ: Պատրապ'ստ և ատրճանակի պայթում:

2. Ատրճանակին պայթումէն վերջը ճամբայ հանողը եթէ տեսնէ որ մէկ կամ աւելի մրցորդներ կանուխ ճամբայ ելան՝ և կամ թէ մրցորդ մը նպատակաւոր կերպով իր ընկերոջ արգելք կը հանգիսանայ, ատրճանակի կրկին հարուածով մը վազողները իւրենց տեղերը կը վերագարձնէ, մինչեւ որ օրէնքին սահմաններուն մէջ ճամբայ ելլեն:

3. 100, 200, 400, 800 մէթր վազքի
մէջ եթէ որ և է արդարացի բողոք հաստա-
ռուի, մրցումը կը կրկնուի, յանցաւոր մրցոր-
դը և կամ մրցորդները չեն մասնակցիր:

4. 1500, 3000 մէթր վազքի մէջ ապօ-
րինութիւններ գործողները դասաւորներու
որոշումով և հաշտարար դասաւորին հաւա-
նութեամբ կամ անմիջապէս մրցումէն դուրս
կը հանուին և կամ թէ հակասակ պարա-
գային առաջնութեան կարգին մէջ չեն
մացուիր:

5. Մրցորդ մը իր ընկերոջմէն մէկ մէթր
հեռուէն և մէկ մէթր առջեւէն կրնայ անց-
նիլ: Հակառակ պարագային դիտումնաւոր
արգելք մը կը նկատուի և ըստ այսմ կը
պատժուի:

(Կնիք կեղրոնի վարչութեան)

Ի պիմաց Հ.Մ.Բ.Պ. Կեդրոնի Աթլ.թիկ

Մարզանքներու Յանձնախումբի

ՎԱՀՐԱՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՖՈԽԾՊՈԼԻ ԽԱՂԸ

ԳԻՐՔԸ

Գրեց՝ ՎԱՐԱԴԻ ՓՈՂԱՐԵԱՆ

Խաղը բացատրուած է բազմաթիւնկար-
ներով և պարզ ոճով, միեւնոյն ատեն բա-
րոյախօսական գիրք մըն է ան :



ԳԻՆ 50 ՂՐՅ.

ԿԵՂԲՈՆՍԹԵՂԻ Հ. Մ. Բ. Մ. կեղբոնի
գրասենեակ Կ. Պոլիս, Սիրքէճի, Խօրասան-
ձեան խան, թիւ 26 :